ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԻՍՏ

Քաղաք Երևան տասնհինգը ապրիլի, երկու հազար քսաներկու թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում ապրիլի 15-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Կարեն Անդրեասյան	Արդարադատության նախարար
Վեռա Սերոբյան	Արդարադատության նախարարի օգնական
Նարինե Արամյան	«Ընդդեմ Իրավական Կամայականության» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
Իզաբելլա Սարգսյան	Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Հայկ Մարտիրոսյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն
Լուսինե Հակոբյան	«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպություն
Արաքս Մելքոնյան	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն

Արթուր Չերչինյան	«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն
Մարիամ Անտոնյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Արտակ Կիրակոսյան	«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն
Մարո Մաթոսյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Նվարդ Փիլիփոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Արսեն Ղազարյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Շուշան Դոյդոյան	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն
Տիգրան Շահբազյան	«Հայսատանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Ամո Շարոյան	«Մեդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպություն
Արշակ Գասպարյան	«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպություն

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ

Ժամ	**Թեմա, զեկուցող**
10:00-10:05	**Ողջույնի խոսք՝** Կարեն Անդրեասյան ՀՀ արդարադատության նախարար
10:05-10:35	**Թեմա՝** Արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումների ներկայացում **Զեկուցող՝** Կարեն Անդրեասյան
10:35-11:00	**Հարցուպատասխան**
11:00-11:15	**Թեմա՝** Հասարակական կազմակերպությունների կողմից առաջնահերթություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ քննարկում
11:15-11:35	**Հարցուպատասխան**

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Նախարար Կարեն Անդրեասյանը ողջունել է ներկաներին և նշել, որ վերջին շրջանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ անցկացվել են քննարկումներ, մի շարք օրենսդրական նախագծերի վերաբերյալ, հատկապես կարևորել է քննարկումներն ուղղված Դատաիրավական ռազմավարությանը:

Օրակարգային հարցերին անդրադառնալով՝ Կարեն Անդրեասյանը նշել է, որ Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել ինչպես 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսված և թերի կատարված միջոցառումների կատարման անհրաժեշտությունը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում և դատական իշխանությունում առկա խնդիրների վերաբերյալ այն նկատառումները և առաջարկությունները, որոնք ներկայացվել են տարբեր շահագրգիռ անձանց կողմից: Ռազմավարության ծրագրով նախատեսվում է դատավորի աշխատանքը առավել գրավիչ դարձնել անձանց համար, բարձրացնել դատավորի սոցիալական երաշխիքները: Նախարարի խոսքով դատավորները բարձր աշխատավարձեր պետք է ստանան, և հատկանշական է այն հանգամանքը, որ առաջին հերթին պլանավորում է բարձրացնել բարձր ատյանների՝ Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների աշխատավարձերը:

Նախարարը ընդգծել է, որ Դատաիրավական բարեփոխումների միջոցով իրականացվում են բազմաթիվ փոփոխություններ և կարևորել՝ իրականացվող բարեփոխումների շրջանակում հասարակական կազմակերպությունների հետ պատշաճ հաղորդակցության կազմակերպումը:

Ի պատասխան հասարակական կազմակերպություններից հնչող հարցերին կապված ՀԿ-ների հետ տարվող աշխատանքների ծավալի և աշխատանքային խմբերում ներգրավվելու հետ կապված, Կարեն Անդրեասյանը նշել է, որ հնարավորության դեպքում ՀԿ-ներից յուրաքանչյուրը կարող է դիմել և ներգրավվել ԱՆ տիրույթում գտնվող աշխատանքային խմբերին տվյալ աշխատանքային խմբի չափանիշներին համապատասխանելու դեպքում:

Արձանագրությունը բաղկացած է 4 էջից:

Նիստը նախագահող՝ Կ. Անդրեասյան